ՄՂ.

Գոն հեռի ի մատրասու իբրև երկու ժամաւ երկու բլրաձև լերինք՝ մին մեծ և միւսն փոքր, յորոց վերայ գոն եկեղեցիք ուխտաւորեալք սրբոյն Թովմայի առաքելոյն, ի բազմաց հետէ ի մտի ունէին տանել զմեզ անդ. այլ վասն յոլով զբաղանաց իւրեանց, ոչ ժամանեցին տանիլ մինչև ցայն օր։ Ուստի յայնմ աւուր խորհեցան ի միասին պարոն յովհաննէսն և պարոն միքայէլն, և առեալ տարան զմեզ ի լեառն մեծ, ուր տեղի նահատակութեան է, ասեն, սրբոյն Թովմայի։ Ի զագաթ լերինն էր եկեղեցի մի յորում էր հրաշագործ պատկեր սուրբ աստուածածնին, և խաչ մի փորագրեալ ի վերայ վիմի. զորմէ, ասեն, փորագրեալ ի սրբոյն Թովմայէ։ Եւ անդ նստի հանապազ փատրի մի օգոստինեան։ Ի ստորէ լերինն մինչև ի վեր արարեալ է սանդուխս ընդարձակս ի կոփածոյ վիմաց, այլ և կամուրջ մի մեծակառոյց ևս ճանապարհաւն՝ հանգուցեալ պարոն պետրոսն ոսկանեան՝ ի դիւրութիւն ուխտաւորաց. յորոց ի չինուածս ծախեալ է երեսուն հազար ոսկի։ Եւ քանզի եհաս ի վերայ մութ գիշերոյն, ոչ ժամանեցաք երթալ ի լեառն փոքր, ուր տեղի աղօթիցն է սրբոյն Թովմայի. այլ եկեալ ագաք ի լոյսն անուանեալ տեղւոջ առ փատրի մի փրանկիսկեան, ուր գոյ եկեղեցի չինեալ յանուն սուրբ աստուածածնին։ Եւ յառաւօտու յարուցեալ՝ եկաք անտի ի մելափօռ ի սուրբն Թովմաս, ողջոյն տալ եպիսկոպոսին...։ Իսկ վասն քաղաքին մատրասու՝ ծանիք, զի է այն ի սկզբանէ ընդ տէրութեամբ անգղիացւոց. և ունի բերդ ամրակառոյց ըստ ամրոցացն եւրոպիոյ։ Ունէին փատրիքն կափուչինք յառաջագոյն յամրոցի անդ զեկեղեցի մեծակառոյց, և բնակարան ընդարձակ. որոց և զպէտսն տային անգղիացիքն ամ ըստ ամէ։ Այլ ի լինիլ առաջին պատերազմին Գաղղիացւոց ընդ անգղիացւոց յառաջ քան զամս ԺԸ, յանուլ գաղղիացւոյն զմատրաս, և յանդրէն դարձուցեալ յետ ամաց ինչ, աւերեալ էին անգղիացիքն զեկեղեցին կափուչինաց, և հանեալ զնոսա յամրոցէ անտի, որպէս և զայլ օտարազգիս. զի կարծիս իմն առեալ էին եթէ նոքա արգելեալ էին ի ժամանակի մարտին՝ պատերազմիլ ուղղափառաց յամրոցէ անտի ընդ գաղղիացիս։ Եւ քանզի ունէին փատրիքն և զայլ եկեղեցի մի արտաքոյ բերդին ուր այժմ բնակութիւնն է հայոց, անդ գնացեալ բնակէին։ Այլ զայն ևս առեալ են այժմ, և արարեալ հիւանդանոց զինուորաց, մինչև չինեսցեն զհիւանդանոց։ Առեալ էին ընդ այնմ և զեկեղեցին հայոց, բայց այժմ անդրէն տուեալ են նոցայն։ Եւ փատրիքն գնացեալ բնակին այժմ արտաքոյ քաղաքին ուր ունէին յառաջագոյն զփոքրիկ եկեղեցի մի, զոր այժմ ընդարձակեալ են։ Եւ անդ երթան ուղղափառքն մեծաւ աշխատութեամբ՝ տեսանել պատարագ ի կիւրակէս և ի տօնս։ Օդն մատրասու, ըստ վկայելոյ բազմաց, բարեգոյն է քան զօդն բանգալու. բայց տօթն յամառան փոքր մի սաստիկ քան զնորայն։ Կերակրեղէնքն ոչ այնչափ դիւրագին են։ Բնակիչք քաղաքին են անգղիացիք, հայք և այլ քրիստոնեայք յայլոց ազգաց, մահմետականք հնդիկք, և կռապաշտք բազումք յոյժ, որք ունին մեհեանս բազումս արտաքոյ բերդին ի բնակութիւնս իւրեանց, զորոց զմին՝ որ մօտ բերդին՝ աւերեալ էին անգղիացիքն, որպէս և զայլ ամենայն բնակութիւնս, որք շուրջ զբերդաւն էին. և այժմ չինեալ են փոխանակ այնր զայլ նորոգ ծախիւք իւրեանց. զորոյ զառաջին քարն հիման եդեալ է կուպեռնաթոն ինքնին։ Քաղաքն մատրաս է բուն տեղի զալէմքարին...։ Ի գալն մեր ի մատրաս՝ խռովութիւն և աղմուկ մեծ էր ի մէջ ամենայն վաճառականացն հայոց. քանզի տուեալ էին գրեթէ ամենեքին առն միում մեծատան ի հայոց անտի ի բեգու գաւառին հնդկաց դրամս յոլովս իբրև ԹՁ հազար ոսկի. զի ի գալ նաւու նորա ի մատրաս և ի վաճառել զինչսն, ասցէ իւրաքանչիւր զբաժին դրամոց իւրոց։ Այլ ի գալ նաւուն և ի վաճառելն զինչսն, տեսին զի և ոչ զչորրորդ մասն դրամոց իւրեանց կարէին ի ձեռս բերել։ Վասն որոյ ի բազում աւուրս խորհուրդ խորհէին՝ գտանել հնարս և ողջոյն ի ձեռս բերել, առանց ելանելոյ ի դատաստան։ Հուսկ յետոյ խորհեցան, գին հատանել նաւուն ի միջի իւրեանց. և անդրէն առաքել առ տէր իւր. զի եթէ նա անդրէն ասցէ զնաւն, վճարեսցէ զպարտս նոցա ողջոյն. ապա թէ ոչ՝ ինքեանք լցեալ անտի ինչս՝ բերցեն և վաճառեսցեն։ Արարին թուղթ և ստորագրեցին ամենեքին։ Բայց քանզի փեսայ առն այնորիկ որ վերակացուն էր նաւուն, ամաւ միով յառաջ նենգութիւն ինչ գործեալ էր ընդ պարոն յովհաննէսն, ըստ թելադրելոյ ոմանց ի հայոց անտի հակառակորդաց պարոն յովհաննէսին, ինքն պարոն յովհաննէսն ոչ միաբանէր ընդ խորհուրդս նոցա, և ոչ ստո-